ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ N ՄՇԴ-260-2023 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան «13» « 10» 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վ. Գասպարյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ՌեԱնիմանիա» Երևանի միջազգային անիմացիոն կինոփառատոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող նախագահ Վ. Քասունու, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հիմք ընդունելով նախարարության ժամանակակից արվեստի վարչության N Ն/13/21680-2023 զեկուցագիրը և համաձայն 2023 թվականի հունիսի 2-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» դրամաշնորհի հատկացման N ՄՇԴ-260-2023 պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 9.1-րդ կետի՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված N 1-ի 3.4-րդ կետում «ք. Երևան, «Մոսկվա» կինոթատրոն, Կինոմիության դահլիճ, ՀԲԸՄ» բառերը փոխարինել «ք. Երևան, Կինոյի տուն» բառերով,

1.2. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված N 2-ի 2-րդ կետում «Մոսկվա» կինոթատրոն» բառերը փոխարինել «Կինոյի տուն» բառերով, «օր 5» բառերը փոխարինել «օր 6» բառերով, «360000» թիվը փոխարինել «300000» թվով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 թերթից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011033348 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի՝
պարտականությունները կատարող
Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

«ՌեԱնիմանիա» Երևանի միջազգային անիմացիոն կինոփառատոն» ՀԿ
ք. Երևան, Կոմիտաս 35
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005359790100 ՀՎՀՀ 00099644
Հեռ.՝ (094) 300771
Նախագահ՝
Վ. Քասունի
(ստորագրություն)
Կ.Տ.